ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Փրայմ մասնաճյուղի ֆիզիկական անձանց MIR Privelege Plus վճարային դեբետային քարտի վերաբերյալ

(հրապարակվել է 30.07.2026թ.)

Վճարային քարտի բացման պայմանագրի կնքումից առաջ անհրաժեշտ է ծանոթանալ վճարային քարտի բացման պայմաններին ինչը զետեղված է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններում և կանոններում (ՕՖԵՐՏԱ)՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ պաշտոնական կայքում www.vtb.am («Քարտեր» բաժնում):

1. Վճարային քարտի բացման, սպասարկման և գործառնությունների իրականացման սակագներ՝

N	Ծառայություն	Սակագին (ՀՀ դրամ)
1.	**Թողարկում**	
	Ռեզիդենտ / ոչ ռեզիդենտ	Անվճար
2.	**Արժույթ**	AMD, RUB, USD, EUR
3.	**Սպասարկում**	
	Ռեզիդենտ / ոչ ռեզիդենտ	Անվճար
4.	**Կանխիկի մուտքագրում**	
	Բանկի բանկոմատներում	Անվճար
	Վճարային տերմինալներում	Համաձայն տերմինալների պայմաններին և սակագներին
	Բանկի դրամարկղերում	AMD/EUR/USD - անվճար RUB - մինչև 400,000 ՌԴ ռուբլի - անվճար, 400,001 և ավել 2% min 1,500 ՀՀ դրամ
	Այլ բանկոմատներում արտերկրում	1.5% նվազ.. 1000 ՀՀ դրամ
5.	**Կանխիկի ելք**	
	Բանկի բանկոմատներում	Անվճար
	Բանկի դրամարկղերում	
	Կանխիկ մուտքագրված	Անվճար
	Անկանխիկ մուտքագրված	AMD - 0.15% նվազ.. 1,500 ՀՀ դրամ RUB - 0.4% նվազ.. 1,500 ՀՀ դրամ USD - 3.5% նվազ.. 1,500 ՀՀ դրամ EUR - 1.5% նվազ.. 1500 ՀՀ դրամ
	Այլ բանկոմատներում արտերկրում	1.5% նվազ.. 1000 ՀՀ դրամ
6.	**Փոխանցումներ և վճարումներ**	
	Փոխանցումներ քարտային հաշվից՝	
	Սեփական հաշիվների միջև	Անվճար
	ՎՏԲ-Հայաստան Բանկի այլ հաշիվներին	Անվճար
	ՀՀ այլ բանկեր, վճարումներ ՀՀ պետական և տեղական բյուջեներին (AMD)	Ռեզիդենտ - 0,1%, նվազ. 1,500 ՀՀ դրամ, max 100,000 ՀՀ դրամ Ոչ ռեզիդենտ - 0,5%, նվազ. 7,000 ՀՀ դրամ
	ԴԱՀԿ վճարումներ	0.15% նվազ. 500 ՀՀ դրամ max 50,000 ՀՀ դրամ
	ՀՀ այլ բանկեր (RUB)	Ռեզիդենտ - 0,15%, նվազ. 5,000 ՀՀ դրամ Ոչ ռեզիդենտ- 0,5%, նվազ. 7,000 ՀՀ դրամ
	ՌԴ այլ բանկեր	Համաձայն բանկային հաշիվների պայմանների և սակագների
	Փոխանցումներ քարտի համարով	
	ՀՀ այլ բանկերի քարտերին	1%
	ՌԴ այլ բանկերի MIR քարտերին	Անվճար
	Քարտին փոխանցման ստացում	
	C2C փոխանցում ՌԴ ցանկացած քարտից	1,5%
	Հեռախոսի համարից	Անվճար
7.	**Քարտի սահմանաչափեր (համարժեք արտարժույթով)**	
	1 գործարքի սահմանաչափ (կանխիկ/անկանխիկ)	399,000 ՀՀ դրամ
	Օրական սահմանաչափ	399,000 ՀՀ դրամ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք www.vtb.am հասցեով:

	Օրական գործարքների քանակ	5
	Օրական սահմանաչափ (անկանխիկ)	4,900,000 ՀՀ դրամ
	Օրական գործարքների քանակ	10
	1 գործարքի սահմանաչափ	400,000 ՀՀ դրամ
	Օրական սահմանաչափ	400,000 ՀՀ դրամ
	Ամսական սահմանաչափ	Առանց սահմանափակ,ամ
8.	**Նվազագույն մնացորդ**	Նախատեսված չէ
9.	**Քարտի վերաթողարկում կորստի/մաշվածության և այլ պատճառով**	Անվճար
10.	**Նոր PIN ծածկագիր**	Անվճար
11.	**Քարտի բլոկավորում/ապաբլոկավորում**	Անվճար
12.	**Քարտից հրաժարվելու տուգանք**	Անվճար
13.	**Բանկոմատի կողմից առգրավված քարտի շտապ տրամադրում (նույն օրը)**	Անվճար
14.	**Քարտի առաքում (Երևանում)**	Անվճար
15.	**Քաղվածքներ, վկայագրեր և այլ փաստաթղթեր**	Համաձայն բանկային հաշիվների պայմանների և սակագների
16.	**SMS ծանուցում**	Անվճար

2. Վճարային քարտի նկարագրություն, էական դրույթներ

2.1. Վճարային քարտը (այսուհետ՝ Քարտ) բացվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Հաճախորդ) կողմից Դիմում-պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կնքման դեպքում և տրամադրվում է 3-5 աշխատանքային օրվա ընտացքում:

2.2. Քարտը բացվում է անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշի տվյալի /սոցիալական քարտ / հանրային ծառայության համարանիշի /սոցիալական քարտ չունենալու տեղեկանքի ներկայացմամբ: Անձի մոտ փաստացի հանրային ծառայության համարանիշի տվյալների /սոցիալական քարտի / հանրային ծառայության համարանիշի /սոցիալական քարտ չունենալու տեղեկանքի բացակայության դեպքում «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Հաճախորդի համաձայնությամբ տվյալները ստանում է ԷԿԵՆԳ համակարգից: Ներկայացված փաստաթղթերի էությունից ելնելով, ինչպես նաև հաճախորդի ռեզիդենտության կարգավիճակը պարզելու համար Բանկը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

2.3. Քարտն բացվում է Պայմանագրի ստորագրման օրը: Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով:

2.4. Քարտի բացման համար նվազագույն մնացորդ սահմանված չէ:

2.5. Քարտին կցվում է 4 արժույթի հաշիվ՝ AMD, RUB, USD, EUR արժույթներով:

2.6. Քարտն բացվում է MIR վճարային համակարգով: Քարտի սպասարկման տարածաշրջանը սահմանում է MIR վճարային համակարգը:

2.7. Նույն քարտային հաշվով հնարավոր է բացել անվանական MIR Travel, Mir Most կամ այլ կից քարտ ընտանիքի անդամի համար: Քարտը բացելու համար անհրաժեշտ է ներկայացնել կից քարտապանի անձը հաստատող փաստաթղթը և հանրային ծառայության համարանիշի տվյալը /սոցիալական քարտ/ հանրային ծառայության համարանիշը /սոցիալական քարտ չունենալու տեղեկանք:

2.8. Քարտով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝
- կանխիկ և անկանխիկ եղանակով դրամական միջոցների մուտքեր և ելքեր
- փոխանցումներ Բանկի քարտային և բանկային հաշիվների միջև
- քարտից քարտ փոխանցումներ՝ ներբանկային, ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, որտեղ սպասարկվում է MIR համակարգը
- անկանխիկ արտարժույթի փոխարկման գործարքներ
- ապրանքների և ծառայությունների համար անկանխիկ վճարումներ (POS / VPOS եղանակներով)
- առցանց գործարքներ (MIR վճարային համակարգի քարտերը սպասարկող կայքերում)
- NFC կամ այլ թոկենիզացված քարտի կիրառմամբ անհպում վճարումներ
- NFC կամ այլ թոկենիզացված քարտի կիրառմամբ դրամական միջոցների ելքեր ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս
- այլ գործարքներ՝ համաձայն Բանկում գործող վճարային քարտերի պայմանների և սակագների
- հեռահար գործառնություններ «VTB Online» ծառայության միջոցով

2.9. Քարտը հնարավոր է համալրել հետևյալ եղանակներով՝
- VTB Online հավելվածում՝ 24/7 ռեժիմով
- Cash in բանկոմատներով (Բանկի բանկոմատներ և ՀՀ տարածքից դուրս MIR քարտեր սպասարկող բանկոմատներ)
- Բանկի մասնաճյուղերում
- «Վիդեո բանկինգ» ծառայության միջոցով (Telegram հավելվածի +37433878700 հեռ. համարին),
- Tell-Cell/ Easy Pay/ Mobidram/ Fast Shift/ Idram վճարային տերմինալների և էլեկտրոնային դրամապանակների միջոցով
- «Հայփոստ» ՓԲԸ բաժանմունքներում

2.10. Քարտի սպասարկման և միջնորդավճարների առկայության դեպքում գանձումն իրականացվում է երկկողմանի կնքվող Պայմանագրի, տվյալ քարտի տեսակի համար հաստատված սակագների, Դեբետային քարտերի տրամադրման կանոնների՝ համաձայն ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններ և կանոններ» (այսուհետ՝ Օֆերտա) 8-րդ գլխի, ինչպես նաև ՀՀ օրենսդրության և վճարային կազմակերպությունների կանոնների հիման վրա:

2.11. Քարտի ամսական սպասարկման միջնորդավճարի առկայության դեպքում (կիրառման դեպքում) գանձվում է յուրաքանչյուր հաջորդող օրացուցային ամսվա առաջին աշխատանքային օրը: Գանձման պահին Քարտի կամ Քարտապանի այլ հաշիվների վրա բավարար դրամական միջոցների բացակայության դեպքում՝ տվյալ ամսվա սպասարկման վճարը գանձվում է քարտի կամ այլ հաշիվներին դրամական միջոցների մուտքագրման առաջին իսկ օրը:

2.12. Քարտի սպասարկմանառկայության դեպքումայն գանձվում է Պայմանագրի ստորագրման պահին: Հետագայում վճարման ամսական եղանակի ընտրության դեպքում, գանձվելով յուրաքանչյուր հաջորդող օրացուցային ամսվա առաջին աշխատանքային օրը, իսկ տարեկան եղանակի ընտրության պարագայում՝ գանձվելով հաշվից յուրաքանչյուր հաջորդող օրացուցային տարվա առաջին ամսվա առաջին աշխատանքային օրը՝ Քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում՝ առանց լրացուցիչ թույլտվության:

2.13. Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով:

- քարտային գործարքների հաշվեգրման ընթացքում առաջնահերթության սկզբունքով դեբետագրումը կատարվում է այն հաշիվից, որի արժույթով կատարվել է գործարքը,
- տվյալ հաշվին գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում դեբետագրումը կատարվում է մնացած արժույթների հաշիվներից և համակարգը ըստ հերթականության փորձում է գումարի դեբետագրում կատարել այն հաշվից, որի վրա բավարար չափով գումար կա,
- եթե հաշիվներին չկա բավարար գումարի չափը, ապա համակարգը հերթականությամբ փորձում է դեբետագրումը կատարել բոլոր հաշիվների առկա մնացորդներից: Քարտապանի կողմից Պայմանագրով նշված հերթականությամբ (տվյալ հերթականությունը Քարտապանի կողմից չնշելու դեպքում, Բանկը կկիրառի հետևյալ հերթականությունը՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ, ՌԴ ռուբլի):
- նման պարագայում գործարքներ հաշվառելիս՝ Բանկը կիրառում է գործարքի հավաստագրման օրվա ընթացքում գործող Բանկի կողմից սահմանած անկանխիկ փոխարժեքները, իսկ գործարքը հաշվեգրելիս՝ հաշվեգրման օրվա ընթացքում գործող Բանկի կողմից սահմանած անկանխիկ փոխարժեքները
- քարտով գործառնությունների, այդ թվում նաև՝ արտարժույթի փոխանակում պահանջող գործարքների, հաշվառման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Բանկը կարող է, առանց Հաճախորդի նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել քարտային հաշվի գծով գերածախս, արգելափակել քարտը՝ գանձելով գերածախսի գումարը, սակագներով սահմանված տոկոսը (առկայության դեպքում նաև տույժեր)
- քարտը արգելափակումից կհանվի տոկոսի/տույժերի և/կամ գերածախսի վճարումից հետո:
- Քարտը թույլ չի տրվում օգտագործել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին ծանուցելու չհաստատել գործարքը և/կամ արգելափակել քարտը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ մինչև գործարքը կատարելը,
- Բանկը կարող է չհաստատել գործարքները և/կամ արգելափակել քարտը, եթե քարտային գործարքները կապված են հանրության կարգերին ու բարոյականությանը հակասող գործարքների հետ,
- Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի,
- Բանկի ներքին ակտերի փոփոխության դեպքում, որոնք ազդեցություն են ունենում Քարտի Պայմանագրի պայմանների վրա կամ հանգեցնում են կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման, և որոնց արդյունքում փոփոխվում է տարեկան սպասարկման վճարը, Բանկը պարտավոր է Քարտապանին՝ նրա կողմից ընտրված եղանակով, տեղեկացնել նոր պայմանների մասին ոչ ուշ, քան փոփոխությունների ուժի մեջ մտնելու օրվանից 15 օր առաջ,

2.14. Եթե միջոցները Քարտին մուտքագրվում կամ դեբետագրվուվում են քարտի արժույթից տարբերվող արժույթով, փոխարկման փոխարժեքը սահմանվում է Բանկի կողմից՝ փոխարկման գործարքի օրը գործող Բանկի փոխարկման փոխարժեքով: Փոխարկումը տեղի է ունենում՝

- գումարների փոխարկման դեպքում գումարը փոխարկվում և վերահաշվարկվում է գործարքի օրը Բանկի կողմից սահմանված անկանխիկ գործարքի փոխարժեքով,
- Ժամը 20:00-ից հետո կատարված գործարքները Բանկի կողմից կատարվում են հաջորդ բանկային օրվա ընթացքում: VTB Online հավելվածի միջոցով փոխարկմամբ գործարքների համար, որոնք կատարվում են ընթացիկ օրվա ժամը 18:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 09:30-ը, կատարվում են հաջորդ բանկային

օրվա ընթացքում՝ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Գործարքի և Բանկի կողմից սահմանված փոխարժեքի միջև անհամապատասխանության դեպքում Բանկը կմերժի գործարքը:

- Քարտային հաշվով գործառնությունների, այդ թվում նաև՝ արտարժույթի փոխանակում պահանջող գործարքների, հաշվառման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Բանկը կարող է, առանց Քարտապանի նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել քարտային հաշվի գծով գերածախս, արգելափակել քարտը՝ գանձելով գերածախսի գումարը, սակագներով սահմանված տոկոսը (առկայության դեպքում նաև տույժեր): Քարտը արգելափակումից կհանվի տոկոսի/տույժերի և/կամ գերածախսի վճարումից հետո:

Ուշադրություն:

Հայաստանում քարտերը ընդունվում և սպասարկվում են միայն Բանկի բանկոմատներում և POS տերմինալներում:

ՀՀ տարածքից դուրս և առցանց կայքերում քարտերը սպասարկվում են միայն արտասահմանյան առցանց հարթակներում, բանկոմատներում և POS-տերմինալներում, որոնք սպասարկում են MIR վճարային համակարգը :

3. Քարտի ակտիվացում

3.1. Քարտը ստանալուն պես Քարտապանի կողմից Քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ուղարկվում է ժամանակավոր PIN-ծածկագիր (բացառությամբ այն դեպքերի, երբ PIN-ծածկագիրը տրամադրվում է փակ ծրարով), որը կարելի է փոխել ինքնուրույն՝ Բանկի ցանկացած բանկոմատում քարտի առաջին իսկ մուտքագրման պահին հետևյալ սկզբունքով.

- քարտը մուտքագրել Բանկի ցանկացած բանկոմատ,
- էկրանին մուտքագրել բջջային հեռախոսահամարին ստացված ժամանակավոր PIN-ծածկագիրը,
- ընտրել այլ գործարքներ/ծառայություններ,
- ընտրել PIN կոդի փոփոխություն,
- այնուհետև մուտքագրել իր կողմից ինքնուրույնաբար որոշված քառանիշ PIN-ծածկագիր,
- հաստատել PIN-ծածկագիրը և ավարտել գործարքը կամ իրականացնել բանկոմատով հասանելի այլ գործարք:

3.2. PIN-ծածկագիրը կիրառվում է Քարտապանի անձը նույնականացնելու համար բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: Ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ տրամադրման երրորդ անձանց: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է միայն Հաճախորդի գրավոր դիմումի (մասնաճյուղերում) կամ բանավոր դիմելու (Կոնտակտային կենտրոնի հետ կապ հաստատելու և նույնականացվելուց հետո) հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ: Ցանկացած պահի ծածկագիրը Բանկի ցանկացած բանկոմատի միջոցով կարող է փոփոխվել 3.1 կետում նշված քայլերով:

4. Քարտի կորուստ և բանկոմատի կողմից առգրավում, բլոկավորում և ապաբլոկավորում

4.1. **Անհապաղ ծանուցում.** Քարտի կորստի, գողության կամ առանց քարտապանի թույլտվության (չվավերացված) գործարքի հայտնաբերման դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բանկին:

4.2. **Կապի միջոցները.** Տեղեկացումը կարող է կատարվել Բանկի հեռախոսակապի միջոցով, Կոնտակտային կենտրոնին 8787 հեռախոսահամարով զանգահարելու միջոցով, կամ Բանկի մասնաճյուղ այցելելով:

4.3. **Մինչև Բանկին տեղեկացնելը.** Քարտապանի կողմից Քարտի կորստի կամ չվավերացված գործարքի մասին Բանկին չտեղեկացնելու ժամանակահատվածում կատարված գործարքների վնասի ռիսկը կրում է Քարտապանը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվել է առանց Քարտապանի նույնականացման (օրինակ՝ առանց 3D Secure կոդի կամ PIN-ի) կամ Բանկի անվտանգության համակարգի թերացման պատճառով:

4.4. **Բանկին տեղեկացնելուց հետո.** Քարտապանի կողմից Բանկին տեղեկացնելուց և Քարտի բլոկավորումից հետո իրականացված բոլոր չվավերացված գործարքների համար պատասխանատվությունը և վնասը ամբողջությամբ կրում է Բանկը:

4.5. **Բանկի բացառիկ պատասխանատվությունը.** Բանկը կրում է ամբողջական պատասխանատվություն Քարտապանի առջև այն վնասների համար, որոնք առաջացել են Բանկի աշխատակիցների մեղքով, համակարգային տեխնիկական սխալների կամ Բանկի կողմից Քարտը ժամանակին չբլոկավորելու հետևանքով:

4.6. **Քարտապանի լրիվ պատասխանատվությունը.** Քարտապանը կրում է ամբողջական նյութական պատասխանատվություն բոլոր գործարքների (այդ թվում՝ չվավերացված) համար, եթե ապացուցվի, որ վնասը հասցվել է նրա խարդախ, դիտավորյալ գործողությունների կամ կոպիտ անփութության (օրինակ՝ PIN կոդը քարտի վրա գրելու) հետևանքով:

4.7. Բանկոմատի կողմից քարտը կարող է առգրավվել հետևյալ դեպքերում՝

- PIN-ծածկագրի սխալ մուտքագրում. Գաղտնաբառը (PIN) երեք անգամ հաջորդաբար սխալ մուտքագրելու դեպքում (անվտանգության նկատառումներից ելնելով)

- Ժամկետանց կամ արգելափակված Քարտ. Եթե Քարտի վավերականության ժամկետն ավարտվել է, կամ այն նախապես արգելափակվել է Քարտապանի կողմից (օրինակ՝ կորստի/գողության պատճառով)
- Քարտը ժամանակին չվերցնելը. Եթե գործառնության ավարտից հետո Քարտապանը սահմանված ժամանակահատվածում (սովորաբար 20-30 վայրկյան) չի վերցնում Քարտը բանկոմատից:
- Մեխանիկական կամ մագնիսական վնասվածք. Եթե Քարտի չիպը կամ մագնիսական ժապավենը վնասված են, և բանկոմատը չի կարողանում ընթերցել տվյալները:
- Բանկի կողմից սահմանված սահմանափակումներ. Եթե առկա է Բանկի հատուկ հրահանգ կամ կասկածելի գործարքների պատճառով Քարտը գտնվում է «բլոկավորված» կարգավիճակում:
- Բանկոմատի տեխնիկական խափանում. Էլեկտրաէներգիայի տատանումների, ծրագրային կամ մեխանիկական անսարքությունների պատճառով

4.8. Քարտի կորստի կամ հափշտակության մասին պետք է անհապաղ տեղեկացնել հետևյալ եղանակներով.
- զանգահարելով Բանկի 87-87 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնելով Ա.Ա.Հ., ծննդյան ամսաթիվ, պայմանագրի մեջ նշված թվային գաղտնագրի և/կամ այլ անձնական տվյալների /հասցե կամ Քարտապանի անձը հաստատող փաստաթղթի համարը: Բանկը կարող է պահանջել Քարտապանի բանավոր կարգադրության գրավոր հաստատում, նախքան քարտն արգելափակվելը: Բանավոր դիմումի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո քարտն արգելափակվում է Քարտապանի կողմից նշված և սակագներով սահմանված տարբերակով:
- ներկայանալով Բանկի ցանկացած մասնաճյուղ, անձը հաստատելուց հետո Քարտն արգելափակվում է առավելագույնը 30 րոպեի ընթացքում:

4.9. Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերվելու դեպքում՝ Քարտապանը պետք է տեղեկացնի այդ մասին Բանկին: Քարտի գործողությունը կարող է վերականգնվել/արգելափակումից հանվել Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո (առկայության դեպքում):

4.10. Քարտը բանկոմատի կողմից առգրավվելու դեպքում.
- եթե Քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղի տարածքում տեղադրված բանկոմատից աշխատանքային ժամերին՝ ապա անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ տվյալ մասնաճյուղի պատասխանատու աշխատակցին և տեղում ստանալ Քարտը, եթե չկա քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
- եթե Քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղերի տարածքներից դուրս գտնվող բանկոմատից կամ ոչ աշխատանքային ժամերին ապա Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը կապ է հաստատում Ձեզ հետ, ճշտում կատարում Ձեզ հարմար մասնաճյուղի վերաբերյալ, որից հետո անձը հաստատող փաստաթղթով զանգը ստանալուց 5 աշխատանքային օր հետո անհրաժեշտ է մոտենալ Ձեր կողմից նշված մասնաճյուղ և ստանալ Քարտը, եթե չկա Քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
- եթե Քարտը առգրավվել է այլ բանկի բանկոմատից, ապա Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը կապ է հաստատում Քարտապանի հետ, ճշտում կատարում Քարտապանին հարմար մասնաճյուղի վերաբերյալ, որից հետո անձը հաստատող փաստաթղթով զանգը ստանալուց 5 աշխատանքային օր հետո անհրաժեշտ է, որ Քարտապանը մոտենա իր կողմից նշված մասնաճյուղ և ստանա Քարտը, իսկ հարցերի դեպքում զանգահարի տվյալ բանկոմատի վրա նշված հեռախոսահամարով:
- Եթե Քարտը առգրավվել է Բանկի բանկոմատի կողմից մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող է զանգահարել 8787 հեռախոսահամարով:

4.11. Քարտի բլոկավորումը և ապաբլոկավորումը կարող է իրականացվել ինչպես Բանկի այնպես էլ Հաճախորդի նախաձեռնությամբ՝ ելնելով անվտանգության, իրավական կամ գործառնական հիմքերից:
- Քարտապանը կարող է բլոկավորել քարտը՝ զանգահարելով 87-87 շուրջօրյա հեռախոսահամարով՝ գողանալու, կորստի, վնասելու և այլ դեպքերում:
- Քարտապանը կարող է ապաբլոկավորել քարտը՝ դիմելով Բանկի մասնաճյուղ կամ Կոնտակտային կենտրոն

5. Բողոքարկման պայմաններ և ժամկետներ

5.1. Պահանջի ներկայացման և վերանայման ընթացակարգ
- Եթե Քարտապանը համաձայն չէ կատարված գործարքի հետ (ներառյալ՝ սպասարկման մերժումը, ապրանքների չմատակարարումը կամ գործարքների գրանցամատյանում սխալ գումարի առկայությունը), Քարտապանն իրավունք ունի գրավոր պահանջ/բողոք ներկայացնել Բանկին,
- Ստացված պահանջ/բողոքի հիման վրա Բանկը սկսում է գումարի վերադարձի ուսումնասիրման գործընթացը (chargeback)՝ համաձայն MIR վճարային համակարգի կանոնների և կարգավորումների,
- Պահանջ/բողոքը Բանկի կողմից ուսումնասիրվում և քննվում է, պատասխանը պատրաստվում և ուղարկվում է Պահանջ/բողոքը Բանկ մուտքագրվելուց ոչ ուշ քան 10-րդ աշխատանքային օր, բացառությամբ միջազգային վճարային համակարգերի կողմից ուսումնասիրվող բողոքների, որոնց պատասխանները տրամադրվում են մինչև 90 օր ժամկետում իսկ արբիտրաժում քննվող գործերի դեպքում գործընթացը կարող է տևել մինչև 180 օր: Ընդ որում Բանկը՝

1) հատուցում է Քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները, կամ
2) մերժում է Քարտապանի կողմից ներկայացված պահանջում նշված գումարը հատուցելու պահանջը, եթե.
ա. խախտվել են պահանջի ներկայացման ժամկետները, կամ
բ. Քարտապանի կողմից խախտվել են Քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոններով կամ Պայմանագրով սահմանված դրույթները, որոնց հետևանքով են ի հայտ եկել Քարտապանի կողմից չվավերացված գործարքները, կամ
գ. Բանկն ունի հիմնավոր փաստեր, որոնք հիմք են հանդիսանում բողոքարկված գործարքները, որպես Քարտապանի կողմից կատարված զեղծարարություն/խարդախություն բնութագրելու համար:

Տեղեկացման ժամկետներ և ընթացակարգեր

- Եթե պահանջը բավարարվում է, Բանկը հետվերադարձ է ձևակերպում Քարտապանի քարտին: Վերադարձումները քարտային հաշվին են մուտքագրվում MIR վճարային համակարգի կանոններով սահմանված ժամկետներում:
- Եթե գործարքը անավարտ է, վիճարկվող գումարը արգելափակված է (հաշվից չի գանձվել) պահանջի ներկայացման պահին, Բանկը ստուգում է գործարքի վերջնական կարգավիճակը: Եթե գործարքը համարվում է անավարտ (ստացող Բանկի կողմից չի գանձվել), վիճարկման գործընթացն ավարտվում է գործարքի չեղարկմամբ,որի մասին Բանկի լիազորված աշխատակիցը տեղեկացնում է Քարտապանին որոշման մասին Բանկի կողմից սահմանված ժամկետում

5.2. Բանկի կողմից թողարկված քարտերի քարտապանների՝ Բանկի բանկոմատներից չստացված գումարի վերաբերյալ վիճարկման դիմումները պետք է ներկայացվեն Քարտապանի կողմից առավելագույնը 1 տարվա ընթացքում՝ գումարի չստացման փաստը հայտնաբերելու պահից սկսած: Նշված ժամկետից հետո ներկայացված դիմումները Բանկի կողմից ենթակա չեն քննության: Վճարահաշվարկային համակարգով կատարված չվավերացված գործարքների մասով անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում, հիմք ընդունելով վճարահաշվարկային համակարգի կանոնները, անհրաժեշտ է Բանկ ներկայացնել Բանկի կողմից սահմանված ձևին համապատասխան գրավոր դիմում/հայտ քաղվածքը ստանալու պահից առնվազն 15 օրացուցային օրվա ընթացքում, իսկ պահանջը ներկայացնելու անհնարինությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում քաղվածքը ստանալու պահից 55 (հիսունհինգ) օրվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում բողոքարկում չստանալու դեպքում գործարքները համարվում են ընդունված:

6. Ռիսկեր և զեղծարարություն

6.1. Զեղծարարությունն այլ անձի քարտի տվյալների (քարտի համար, CVV-կոդ, PIN-կոդ, մեկանգամյա գաղտնաբառեր) ապօրինի ձեռքբերումն ու օգտագործումն է՝ հաշվից գումար գողանալու նպատակով:

6.2. Զեղծարարության տեսակներից են `

- Ֆիշինգ - կեղծ հղումների միջոցով Ձեր տվյալների կորզում,
- Վիշինգ - հեռախոսազանգեր, երբ ներկայանում են որպես բանկի աշխատակից և խնդրում հայտնել SMS-կոդը կամ PIN-ը,
- Սքիմինգ- բանկոմատների վրա տեղադրված սարքերի միջոցով քարտի տվյալների պատճենում:

6.3. Բանկը կիրառում է ռիսկերի զսպման մեխանիզմներ, պաշտպանության բազմաշերտ համակարգեր.

- 3D Secure համակարգ: Ինտերնետային գնումների ժամանակ գործարքը հաստատվում է միայն Քարտապանի հեռախոսահամարին ուղարկված մեկանգամյա գաղտնաբառի միջոցով: Եթե OTP պարունակող հաղորդակցությունը չի ստացվում 60 վայրկյանի ընթացքում, խորհուրդ է տրվում անմիջապես չկրկնել հարցումը, այլ ստուգել՝
  1) Բջջային ցանցի և ինտերնետ կապի առկայությունը,
  2) SMS-ների համար նախատեսված հիշողության ծավալը, համոզվելով, որ այն լցված չէ,
  3) «Ինքնաթիռի ռեժիմի» (Airplane mode) կամ VPN-ի կարգավիճակը, համոզվելով, որ դրանք անջատված են, քանի որ որոշ օպերատորներ արգելափակում են SMS ծառայությունները,
  4) Կրկնակի փորձել ստանալ կոդը և սեղմել «Կրկին ուղարկել կոդը» կոճակը,
  5) Եթե կոդը չի ստացվում վերոնշյալ քայլերը կատարելուց հետո, հարկավոր է կապ հաստատել Բանկի Կոնտակտային կենտրոն:
- Գործարքների մոնիտորինգ: Բանկի ավտոմատացված համակարգերը վերլուծում են գործարքները և կասկածելի ակտիվության դեպքում կարող են ժամանակավորապես բլոկավորել Քարտը:
- Սահմանաչափերի կառավարում: Քարտապանը կարող է սահմանել օրական կանխիկացման կամ անկանխիկ գործարքների առավելագույն սահմանաչափեր:
- Արագ արգելափակում: Բանկի շուրջօրյա Կոնտակտային կենտրոնի միջոցով Քարտն անմիջապես արգելափակելու հնարավորություն:

6.4. Օգտակար խորհուրդներ անվտանգության համար

- **Գաղտնիություն:** Երբեք և ոչ մեկին (այդ թվում՝ բանկի աշխատակից ներկայացող անձանց) մի՛ հայտնեք Ձեր քարտի PIN-կոդը, CVV-կոդը (քարտի հակառակ կողմի 3 նիշը) կամ SMS-ով ստացված գաղտնաբառերը:
- **Զգոնություն հղումների հանդեպ:** Խուսափեք էլեկտրոնային կասկածելի նամակներով կամ մեսենջերներով ստացված հղումներով քարտային տվյալներ լրացնելուց (Ֆիշինգ): Միշտ ստուգեք կայքի հասցեն:
- **Անվտանգ կանխիկացում:** Բանկոմատից օգտվելիս համոզվեք, որ ստեղնաշարի կամ քարտի ընդունիչի վրա չկան կասկածելի սարքավորումներ:
- **Ծանուցումներ:** Ակտիվացրեք SMS կամ Push-ծանուցումները՝ յուրաքանչյուր գործարքի մասին ակնթարթորեն տեղեկանալու համար:

6.5. Քարտը թույլ չի տրվում օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկը իրավունք ունի առանց Քարտապանին ծանուցելու չհաստատել գործարքը և/կամ արգելափակել Քարտը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ նախքան գործարքի կատարումը:

6.6. Բանկը կարող է չհաստատել գործարքները և/կամ արգելափակել Քարտը, եթե քարտային գործարքները կապված են հանրության կարգերին ու բարոյականությանը հակասող գործարքների հետ:

6.7. Բանկը երաշխավորում է Քարտապանի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

6.8. Քարտի գծով Պայմանագրի պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման դադարեցման վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը կհանգեցնի տարեկան սպասարկման վճարի փոփոխմանը, Բանկը նոր պայմանների վերաբերյալ տեղեկացնում է Քարտապանին վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

6.9. ***Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ՝ ընտրելով Բանկի կողմից առաջարկվող տարբերակներից Ձեր նախընտրած եղանակը: Այդուհանդերձ, հայտնում ենք, որ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիության բարձր մակարդակ:***

7. Քարտի վերաթողարկում և փակում

7.1. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո, գողացված կամ կորցված քարտի պարագայում Բանկը վերաթողարկում է քարտը Հաճախորդի պահանջով՝ մասնաճյուղ կամ Կոնտակտային կենտրոն դիմելու պարագայում Բանկի կողմից սահմանված ժամկետներում: Բանկը ավտոմատ վերաթողարկում է միայն այն աշխատավարձային և թոշակի քարտերը, որոնք բավարարում են Բանկի կողմից սահմանված պահանջներին: Նշված քարտերը նույն ամսվա մեջ վերաթողարկվում և ուղարկվում են այն մասնաճյուղեր, որտեղ ի սկզբանե բացվել են այդ քարտերը: Ժամկետի լրանալու դեպքում քարտերը վերաթողարկվում են անվճար:

7.2. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Քարտապանը պարտավոր է Քարտը վերադարձնել Բանկ:

7.3. Բանկը չի կրում պատասխանատվություն, եթե Քարտապանի կողմից տրամադրված հեռախոսահամարը սխալ է կամ բացակայում է:

7.4. Քարտի ժամկետի ավարտից հետո ավտոմատ վերաթողարկում չի իրականացվում և հաշիվը փակվում է, եթե
- վերջին 6 ամսում հաճախորդի նախաձեռնությամբ գործարք չի իրականացվել (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) և քարտային հաշիվների գումարային մնացորդը չի գերազանցում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը,
- քարտի գծով առկա է սպասարկման վճարի պարտք (3 ամիս և ավել)
- քատրը կարող է չվերաթողարկվել Բանկի ներքին իրավական ակտի հիման վրա, հաճախորդին նախապես տեղեկացնելով,

7.5. Հաճախորդի կողմից վերջին 6 ամսում Քարտապանի նախաձեռնությամբ Քարտով գործարք չկատարվելու (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) և հաշիվների մնացորդային գումարը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը գերազանցելու դեպքում, Քարտի ֆիզիկապես վերաթողարկում իրականացվում է Հաճախորդի կողմից Բանկ համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում:

7.6. Բանկն իրավունք ունի միակողմանի, առանց Քարտապանին ծանուցելու լուծել պայմանագիրը և ոչնչացնել քարտը, եթե Քարտապանը չի ներկայացել այն ստանալու համար Քարտը վերցնելու մասին Հաճախորդին տեղեկացնելու օրվան հաջորդող 730 օրացուցային օրերի ընթացքում, իսկ այն քարտերի մասով, որոնց վրա առկա է չօգտագործված վարկային գիծ 180 օրացուցային օրը լրանալուց հետո (վարկը ավտոմատ մարվում է, վարկային գծի տրամադրման պայմանագիրը համարվում է լուծված/դադարած):

7.7. Բանկն իրավունք ունի միակողմանի, առանց Քարտապանին նախապես տեղեկացնելու փակել Քարտն ու քարտային հաշիվները, եթե վերջին 12 ամսում Հաճախորդի կողմից Քարտով որևէ գործարք չի կատարվել և քարտային հաշվին առկա միջոցները 10,000 ՀՀ դրամից քիչ են: Ընդ որում հաշվին առկա դրական մնացորդը տեղափոխվում է Բանկում առկա Քարտապանի այլ հաշիվներին/քարտերին կամ Բանկի տարանցիկ հաշվին: Քարտապանի հաշիվներին առկա մնացորդի գումարը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

7.8. Բանկն իրավունք ունի չլուծել Պայմանագիրը, եթե Քարտապանի հաշիվներին առկա գումարները բավարար չեն Բանկի հանդեպ Քարտապանի ստանձնած պարտավորությունների մարման համար, ընդ որում այդ պարագայում Քարտապանի քարտի նկատմամբ կարող են կիրառվել Սակագներով սահմանված վճարները /առկայության դեպքում/:

7.9. Քարտապանն իրավունք ունի գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով լուծել Պայմանագիրը և դադարեցնել Քարտի հետագա սպասարկումը միաժամանակ մարելով Բանկի նկատմամբ պարտավորությունները կամ ապահովելով նվազագույնը Բանկի նկատմամբ նշված քարտի գծով առկա պարտավորությունների չափով դրական մնացորդ: Քարտապանի կողմից լրացրած դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի Քարտի գործողությունը՝ մարելով Բանկի հանդեպ Քարտապանի պարտավորությունները Բանկում Քարտապանի հաշիվներին առկա գումարներից:

7.10. Քարտի պայմանագրի գործողությունը դադարեցնելուց Քարտապանի քարտային հաշիվը կփակվի, իսկ քարտային հաշվին առկա միջոցները կփոխանցվեն Հաճախորդի՝ Բանկում առկա այլ հաշիվներին կամ կտրամադրվեն Քարտապանին՝ իր նախընտրած եղանակով:

7.11. Քարտային հաշվի փակման գործընթացը լիարժեք համարելու համար անհրաժեշտ է հետևել սահմանվա ծ կանոններին.

- **Քարտի հանձնում:** Հաշվի փակման դիմում ներկայացնելիս՝ Քարտապանը պարտավոր է Բանկին վերադարձնել իր մոտ առկա բոլոր գործող քարտերը (հիմնական և կցված):
- **Քարտի ոչնչացում:** Վերադարձված քարտերը ոչնչացվում են Բանկի կողմից, որպեսզի բացառվի դրանց հետագա օգտագործումը:
- **Պատասխանատվություն:** Քարտը չվերադարձնելու դեպքում Քարտապանը կրում է լիակատար պատասխանատվություն այդ քարտով կատարված բոլոր գործառնությունների և հնարավոր զեղծարարությունների հետևանքով առաջացած վնասների համար:
- **Վնասների հատուցում:** Եթե քարտը չվերադարձնելու հետևանքով Բանկը կրում է նյութական վնաս, ապա Քարտապանը պարտավոր է հատուցել այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.12. Քարտը բանկոմատի միջոցով առգրավվելու օրվանից 180 օրվա ընթացքում Հաճախորդի կողմից քարտը չստանալու դեպքում, Բանկն իրավունք ունի ոչնչացնել քարտը փակել հաշիվները, դրական մնացորդը փոխանցելով Բանկում առկա այլ հաշիվներին կամ Բանկի տարանցիկ հաշվին, որը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ բացառությամբ քարտին տրամադրված վարկային գծի առկայության դեպքերի, որի պարագայում վարկային քարտն ու քարտային հաշիվները փակվում են միայն այն պարագայում, երբ տվյալ Վարկային քարտին տրամադրված Վարկային գծի մասով չկան պարտավորություններ /տվյալ դեպքում Վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանգիրը համարում է լուծված/դադարած, իսկ վարկը ուղղվում է մարման/:

8. Քարտի անվտանգության և օգտագործման նվազագույն պայմանները

8.1. Քարտի և ծածկագրի օգտագործման հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը կրում է Հաճախորդը և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ ծածկագրի օգտագործման հետևանքով իր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքն իրականացվել է միկրոպրոցեսորային (չիպային) քարտի միջոցով և երբ վնասը պատճառվել է Բանկի մեղքով;

8.2. Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով անհրաժեշտ է:

- Քարտը պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց:
- Քարտը չպահել էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ;
- ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին;
- հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում;
- չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի դարձերեսին առկա եռանիշ թվերը (CVV2 կոդը);
- եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվեք գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս, ինչպես նաև, առևտրային կետերում

ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվել միայն վստահելի կայքերից;
- բանկոմատներով գործարքներ իրականացնելիս նախընտրել ՎՏԲ-Հայաստան Բանկ-ի բանկոմատները: Հետևել, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց;
- հետևել, որ POS-տերմինալներով անկանխիկ գործարքներ կատարելիս վճարում ն իրականացվի Հաճախորդի ներկայությամբ և Քարտը դուրս չբերվի տեսադաշտից: Նախքան վճարման անդորրագիրը ստորագրելը՝ ստուգել դրա վրա նշված վճարման ենթակա գումարի ճշտությունը;
- օգտվել Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցում ներ ստանալու Բանկի SMS banking ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ: Բանկը սպառողի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրում է քարտի օգտագործման նվազագույն պայմանները:
- Ինտերնետում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկն օգտագործում է «3D-Secure»/«Secure Code» ծառայությունը, որի համաձայն ինտերնետում՝ «3D-Secure»/«Secure Code» ապահովող կայքերում, քարտով վճարում կատարելիս պետք է մուտքագրել քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ստացած մեկանգամյա գաղտնաբառը

8.3. Բանկն իրավունք ունի մերժել ինտերնետում քարտով իրականացվող վճարումը, եթե Հաճախորդի կողմից ստորագրված քարտի տրամադրման պայմանագրում նշված չէ կամ առանց Բանկին ծանուցման փոխվել է պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարը, որի արդյունքում
- բջջային հեռախոսահամարին չի ուղարկվում «3D-Secure»/«Secure Code» ապահովող կայքերում վճարման իրականացման համար անհրաժեշտ մեկանգամյա գաղտնաբառը
- «3D-Secure»/«Secure Code» չապահովող կայքերում չի բացառվում երրորդ անձանց կողմից Հաճախորդի քարտի չլիազորված օգտագործման ռիսկը:

  Բանկը Հաճախորդին հետ Պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրում է Քարտի օգտագո ծման նվազագույն պայմանները:

9. Քարտի հեռավար բացում

9.1. Քարտը կարող է բացվել հեռակա կարգով՝ VTB Online բջջային հավելվածի միջոցով, կամ կապվելով Բանկի կոնտակտային կենտրոնի հետ՝ զանգահարելով 87-87 հեռախոսահամարով:
- Հեռակառավարման համակարգերի միջոցով (VTB Online բջջային հավելվածով) նույն գործառնական օրվա ընթացքում (մինչև 20:00) ներկայացված քարտի բացման հայտը Բանկի կողմից ընդունվում է ի կատարման տվյալ գործառնական օրվա ընթացքում և պայմանագիրը համարվում է կողմերի միջև կնքված տվյալ օրը
- Գործառնական օրից դուրս ներկայացված Հեռակառավարման համակարգերի միջոցով քարտի բացման հայտերի դեպքում հաշվի պայմանագիրը կնքված է համարվում հաջորդ գործառնական օրը
- Հեռակառավարման համակարգերի միջոցով Հաճախորդը կարող է բացել քարտ միայն իր անունից
- Հեռակառավարման համակարգերի միջոցով բացված քարտի դեպքում Բանկը Հաճախորդին է ուղարկում քարտի բացումը հաստատող, Բանկի կողմից սահմանված եղանակով հաղորդագրություն (SMS հաղորդագրություն, PUSH, E-mail և այլն) կամ քարտի բացումը մերժելու մասին հաղորդագրություն
- Քարտապանը ստանում է Պայմանագրի իր օրինակը, տեղեկատվական ամփոփագիրը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը իր կողմից նշված E-mail հասցեին
- Քարտապանը իրավունք ունի Բանկի գործունեության վայրում թղթային ձևով ստանալ Հեռակառավարման համակարգերով բացված քարտի փաստաթղթերի օրինակները, ինչպես նաև քարտի քաղվածքները

10. Վեճերի լուծման կարգը

10.1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.2. Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

10.3. Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

Ուշադրություն՝
Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն

Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՁԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԾՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ www.fininfo.am

Հայտարարություն: Քարտը և քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության քարտից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է որի մասին հաշվետերը տեղեկացվում է Բանկի կողմից ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով:

11. Երաշխավորված ավանդի առավելագույն սահմանաչափերը
Բանկային / քարտային հաշվի գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	**Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով« և արտարժույթով ավանդ**	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է	**Եթե դրամային ավանդը 7միլիոն դրամից ավել է**
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

* Ավանդ են համարվում նաև ֆիզիկական անձանց կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով: